Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ԹԻՎ ԹԻՎ 22-Ա, 24-Ա, 54-Ա, 55-Ա, 56-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 22-Ա որոշմամբ չեն պահպանվել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի «բ» և «գ» կետերի պահանջները: Բացի այդ, անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի դրույթներին:

Թիվ 24-Ա որոշման հղումը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանին սխալ է, իսկ որոշման թիվ 1 հավելվածի դրույթները համարակալված չեն:

Թիվ 54-Ա, թիվ 55-Ա և թիվ 56-Ա որոշումների մեջ անհրաժեշտ է «պետհամարանիշի» բառը փոխարինել «հաշվառման համարանիշով» բառերով:

20.04.2021թ.